



Օրենսդրական խնդիրներ խոշտանգման դեմ պայքարում

Թեև ներպետական օրենսդրությունում ներդրվել է խոշտանգումների արգելքը սահմանող իրավանորմներ, այնուամենայնիվ, առ այսօր ներպետական օրենսդրական մակարդակում առկա են խնդիրներ, որոնք չեն նպաստում խոշտանգման դեմ արդյունավետ պայքարի իրականացմանը: Ստորև կներկայացնենք առավել հրատապ խնդիրները: Այսպես.

1. Խոշտանգումը սահմանող իրավանորմը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով, որը ներառված է պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գլխում: Նշված գլխում հանցագործությունների մեծ մասին բնորոշ է հատուկ սուբյեկտը՝ պաշտոնատար անձը, որի հասկացությունը սահմանվում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն որի՝

պաշտոնատար անձինք են՝

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք.

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ գործերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Սակայն, հարկ է նշել, որ ազատությունից զրկված անձինք կարող են ենթարկվել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի նաև այն անձանց կողմից, որոնք ներպետական օրենսդրության իմաստով չեն հանդիսանում պաշտոնատար անձ, որպես օրինակ՝ կարող ենք նշել հոգեբուժական կազմակերպություններում, «Դատապարտյալների հիվանդանոցում» կամ քրեակատարողական հիմնարկներում սանիտարի կամ բժշկական սպասարկում իրականացնող անձի կողմից իրականացվող խոշտանգման կամ վատ վերաբերմունքի գործողությունները, որոնք, սակայն, վերոգրյալ իրավանորմի՝ Հայաստանի Հանրապետությունում գործող մեկնաբանությամբ չեն համարվում պաշտոնատար անձինք: Այս պարագայում արարքը խոշտանգման փոխարեն կորակվի որպես մարդու կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն, ինչը չի բխում

միջազգային հանրաճանաչ փաստաթղթերից և թույլ չի տալիս ունենալ հստակ պատկեր ազատությունից զրկված անձանց նկատմամբ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի բոլոր դրսևորումների վերաբերյալ:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքի խախտման փաստով ոչ նյութական վնասի հատուցումը, համաձայն որի՝ անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված **խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը:**

Վերոգրյալից բխում է, որ քաղաքացիական դատավարության ընթացակարգով հատուցման է ենթակա ոչ միայն խոշտանգման, այլև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքի խախտման փաստի առթիվ պատճառված ոչ նյութական վնասը: Սակայն, ի տարբերություն խոշտանգման, որն իր ամրագրումը ստացել է ներպետական օրենսդրությունում, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու հասկացություններն իրենց ամրագրումը չեն ստացել, ուստի խնդիրներ են առաջանում անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկվելու փաստն դատարանում հաստատելու հետ կապված:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով, 309.1-րդ հոդվածով, 341-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հանցանքներ կատարելու համար չի սահմանվում վաղեմության ժամկետներ, համաներում կամ ներում չկիրառելու պահանջներ, որոնք բխում են միջազգային հանրաճանաչ փաստաթղթերով սահմանված խոշտանգման բացարձակ արգելքից: Հարկ է ընդգծել, որ չնայած ՀՀ Սահմանադրությամբ սահմանված է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի՝ ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը լինելու և ՀՀ ներպետական օրենսդրության նկատմամբ գերակա լինելու հանգամանքը, այնուամենայնիվ, ՀՀ իրավակիրառ մարմինը ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով, 309.1-րդ հոդվածով, 341-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված

հանցանքներ կատարած անձանց նկատմամբ շարունակում է կիրառել վաղեմության ժամկետներ, համաներում կամ ներում, ուստի անհրաժեշտ է ՀՀ ներպետական օրենսդրությունում իմպլեմենտացնել միջազգային հանրաճանաչ փաստաթղթերով սահմանված վաղեմության ժամկետներ, համաներում կամ ներում չկիրառելու պահանջները խոշտանգման հանցակազմը պարունակող հանցագործությունների դեպքում:

4. Ներպետական օրենսդրության մակարդակում խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքի խախտման փաստի առթիվ առավել խոցելի վիճակում են գտնվում ազատությունից զրկված անձինք, որոնց պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) դեմ բողոքարկման իրավունքի հասանելիությունը խնդրահարույց է: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսվում է պաշտոնատար անձանց գործողությունների դեմ դատարան կամ օրենքով նախատեսված այլ մարմին բողոքարկման հնարավորություն, այնուամենայնիվ, նույն օրենսգրքով չի սահմանվում Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի և այլ իրավասու մարմինների գործողությունների, անգործության կամ նրանց կողմից կայացված որոշումների բողոքարկման հստակ կարգ, ազատությունից զրկված անձի իրավունքների խախտման փաստի արձանագրման հնարավորություն, դրա ժամկետներ, բողոքին ներկայացվող պահանջներ, բողոքների քննարկման և դրանց լուծման կարգ, կայացվող դատական ակտի տեսակ, դրանով պայմանավորված՝ ակտի ուժի մեջ մտնելու ժամկետ, վերաքննության և վճարեկության կարգով դրանց բողոքարկումը, ինչպես նաև նշանակություն ունեցող այլ հարցեր:

5. ՀՀ օրենսդրությունում առկա է խնդիր կապված ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման ինստիտուտի հետ: Մասնավորապես, ՀՀ Կառավարության 26.05.2006թ-ի թիվ 825-Ն որոշման հավելված 2-ով սահմանվում են պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունները, որոնց ցանկը սպառիչ է: Մակայն, գործնականում, հաճախ են հանդիպում ծանր հիվանդություններով տառապող ազատազրկված անձինք, որոնց հիվանդությունները չեն համապատասխանում նշված որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկին: Այդպիսի հիվանդություններից են, որպես օրինակ, իշեմիկ ինսուլտ ձախ միջին ուղեղային զարկերակի կեղև-ենթակեղևային ճյուղերի ավազանում հիվանդությունը, աթերոսկլերոզը, զարկերակային հիպերտենզիան, հեմիպլեգիան, զարկերակային հիպերտենզիայի երկրորդ և երրորդ աստիճանները և այլն: Խնդիրն առավել հրատապ է նաև այն առումով, որ ՔԿՀ-ների նյութատեխնիկական պայմաններն ու համապատասխան մարդկային ռեսուրսները բավարար չեն ծանր հիվանդությամբ տառապող դատապարտյալներին անհրաժեշտ խնամքով ապահովելու համար: Վերոգրյալ որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկը ընդունվել է 2006 թվականի

մայիսի 26-ին, որից հետո փոփոխության չի ենթարկվել, այդ պատճառով չի համապատասխանում ներկա ժամանակի պահանջներին և ունի վերանայման կարիք:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում բժշկական բնույթի վարույթի ժամկետներ, ինչի արդյունքում հոգեբուժական հիվանդանոցներում տեղավորված անձինք կարող են պահվել տևական ժամանակահատվածով անկախ այն հանգամանքից, որ անձը հնարավոր է ապաքինված լինի և այլևս հասարակությունից մեկուսացման անհրաժեշտություն չլինի: Օրենսդրական մակարդակում անհրաժեշտ է ամրագրել հոգեբուժական հիվանդանոցներում պահվող անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու շարունակականության իրավաչափության դատական վերանայման պահանջ, որպեսզի բոլոր այն դեպքերում, երբ անձը չունի հարկադիր բուժման կարիք, կամ դա հնարավոր է իրականացնել ընդհանուր կամ արտահիվանդանոցային պայմաններում, հնարավորություն լինի դատարան ներկայացնել միջնորդություն բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների վերանայման վերաբերյալ: